ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան
համայնք,

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան 1-ի մաս, կենտ.փ շ.1, Հեռ.
(098)048046 ,

N 03-41
27 փետրվար 2014թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի, պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու 25.02.2014թ. թիվ 8-Ն, 9-Ա, 10, 11-Ա որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2014թվականի N 8-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով , 69 հոդվածով, <<Բյուջետային Համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով.

1. Հաստատել Թումանյան համայնքի 2013թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի այդ թվում .

1) Եկամուտների գծով		30678.8	հազար դրամ
	Վարչական բյուջեի մասով	30678.8	հազար դրամ
	Ֆոնդային բյուջեի մասով	181.5	հազար դրամ
2) Տարեկան ազատ մնացորդի գծով		833.3	հազար դրամ
	Վարչական բյուջեի մասով	833.2	հազար դրամ
	Ֆոնդային բյուջեի մասով	0.1	հազար դրամ
3) Ծախսերի գծով		30621.5	հազար դրամ
	Վարչական բյուջեի մասով	29845.5	հազար դրամ
	Ֆոնդային բյուջեի մասով	776.0	հազար դրամ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
5. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված

Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու
2014 թ. փետրվարի 25-ի թիվ 8- Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2013թ–ի տարեկան բյուջեն կատարվել է եկամուտների գծով 100.4 %-ով, նախատեսված 30567.5 հազ.դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 30678.8 հազ. դրամ: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 4243.7 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 4355.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝102.6 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ) նախատեսված 26323.8 հազ. դրամը տրվել են ամբողջությամբ կամ կատարման տոկոսը 100.0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 25278.6 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%, պետական բյուջեից վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) 1045.2 հազ. դրամը նույնպես տրվել են ամբողջությամբ:

1. Բյուջեի վարչական մասի եկամուտները

2013թ-ի տարեկան բյուջեի վարչական մասով նախատեսված էր 30567.5 հազ. դրամ եկամուտ, փաստացի մուտքերը կազմել են 30678.8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100.4 % : Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված էր 4243.7 հազ. դրամ, կատարվել է փաստացի մուտք 4355.0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 102.6 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 26323.8 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0%,այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 25278.6 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100.0%, պետական բյուջեից վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) 1045.2 հազ. դրամը նույնպես տրվել են ամբողջությամբ:

1) Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2013 թ-ի տարեկան բյուջեով նախատեսված էր 774.1 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 922.9 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 119.2 %: Նախորդ տարվա համեմատ հողի հարկի կատարման տոկոսը աճել է:

2) Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար նախատեսված էր 293.7 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 355.7 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 121.1 %, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր գույքահարկ 1456.3 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 1432.1 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը՝ 98.3 %, որը նախորդ տարվա համեմատ նույնպես աճել է :

3) Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները նախատեսված էր 380.0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 309.0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 81.3 %, որը նախորդ տարվա համեմատ նույնպես աճել է :

4) Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2013թ-ի տարեկան բյուջեով նախատեսված էր 1339.6 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 1335.3 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 99.7 % :

5) Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ

Այս եկամտատեսակը նախատեսված էր 26323.8 հազ. դրամ, այն տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100 %,պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիա) նախատեսված էր 1045.2 հազ. դրամ,տրվել է 1045.2 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 100 % : Այս եկամուտը տրվել է աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի ծախսերի փոխհատուցման համար և այն ծախսվել է ըստ նպատակի:

6) Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները

Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները 2013թ.-ի տարեկան բյուջեով կազմել է 181.5 հազ. դրամ, որը վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացում է: Այն նույնպես տրվել է ամբողջությամբ:

2. Բյուջեի վարչական մասի ծախսերի կատարողականը

Բյուջեի վարչական մասի ծախսերը 2013թ.-ի տարեկան բյուջեով նախատեսված էր 30567.5 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսվել է 29845.5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 97.6 %:

1) Ըստ գործառնական դասակարգման ծախսերը կատարվել են՝

ա) Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների գծով ծախսերը 2013 թ.-ի տարեկան բյուջեով նախատեսված 18217.8 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 17745.3 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 97.4 %:

բ) Քաղաքացիական պաշտպանության համար նախատեսվել էր 20.0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախս չի կատարվել:

գ) Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 1266.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 1266.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 100.0 % :

դ) Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության՝ այդ թվում փողոցների լուսավորության գծով ծախսերը նախատեսված 820.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 602.5 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 73.5 %:

ե) Այլ մշակութային կազմակերպությունների գծով ծախսերը նախատեսված էր 45.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 35.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 77.8 %:

զ) Կրթության համար նախատեսված ծախսերը 9515.2 հազ. դրամի դիմաց փաստացի

ծախսվել է 9515.2 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 100.0 %, այդ թվում կամա-
դպրոցական կրթություն՝ 6204.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս կատարվել է 6204.0
հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100.0 %,արտադպրոցական դաստիարակության համար
նախատեսված է 2871.2 հազ. դրամ, որի համար փաստացի ծախսը կատարվել է 2871.2 հազ.
դրամ կատարման տոկոսը՝ 100.0 %, իսկ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայու-
թյունների գծով ծախսերը նախատեսված էր 440.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել
է 440.0 հազ. դրամ, կատարման տակոսը՝ 100.0 % :

է) Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 500.0 հազ. դրամ,
փաստացի ծախս կատարվել է 500.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 100.0%:

ը) Բյուջեի վարչական մասի եկամուտներից 2013թ.-ի տարեկան բյուջեով նախատեսված
181.5 հազ. դրամը, որը վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե
կատարվող հատկացում է, նույնպես տրվել է ամբողջությամբ:

2).Ըստ տնտեսագիտական դասակարգման 2013 թ.-ի
ընթացքում բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել են՝

ա) Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ նախատեսված 14671.9 հազ. դրամի
փոխարեն կատարվել է ծախս՝ 14603.6 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 99.5 %:

բ) Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման ծախսերը նախատեսված 4865.9 հազ.
դրամի դիմաց կատարվել է փաստացի ծախս 4259.8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝
87.5 %:

գ) Ընթացիկ դրամաշնորհները համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝
նախատեսված էր 10093.2 հազ. դրամ,փաստացի կատարվել է 10093.2 հազ. դրամ ծախս
կամ կատարման տոկոսը՝ 100.0 %:

դ) Սոցիալական նպաստներ և կենսաթոշակների գծով ծախսերը նախատեսված էր 500.0 հազ.
դրամ,փաստացի ծախս կատարվել է 500, 0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100.0%:

ե) Այլ ծախսերը, այդ թվում պահուստային ֆոնդը նախատեսված էր 436.5 հազ. դրամ, սակայն
փաստացի կատարվել է 388.9 հազ. դրամ ծախս, կատարման տոկոսը՝ 89.1 %:

զ) Բյուջեի վարչական մասի եկամուտներից 2013թ.-ի տարեկան բյուջեով նախատեսված
181.5 հազ. դրամը, որը վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե
կատարվող հատկացում է, նույնպես տրվել է ամբողջությամբ:

3. Բյուջեի ֆոնդային մասի ծախսերը

Թումանյան համայնքի 2013թ.-ի ընթացքում բյուջեի ֆոնդային մասով նախատեսված էր 776.0
հազ. դրամ ծախս, փաստացի ծախս կատարվել է 776. 0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 100.0
%:

ա) Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը , որից՝ ճանապարհային տրանսպորտի գծով
նախատեսված էր 476.0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսը կազմել է 476.0 հազ. դրամ կամ
կատարման տոկոսը՝ 100.0 %:

բ)Կարչական սարքավորումների ձեռք բերման համար նախատեսված էր 300.0 հազ. դրամ ծախսի, փաստացի ծախսը կազմել է 300.0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100.0 %:

գ) Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)նախատեսված էր 59.9հազ.դրամ փաստացի կազմել է 59.9 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100.0 %:

4.Համայնքի բյուջեի հավելուրդը կամ պակասուրդը (դեֆիցիտը)

Համայնքի բյուջեի ֆոնդային բյուջերի տարեսկզբի մնացորդը կազմել է 534.5 հազ. դրամ, իսկ տարեվերջի հավելուրդը բյուջեի վարչական մասում փաստացի կազմում է 833.3 հազ. դրամ,ֆոնդային մասում՝ 0.1 հազ. դրամ:

Թումանյան համայնքի 2013թ.-ի տարեկան բյուջեի կատարման բարձր ցուցանիշը համայնքի ղեկավարի և քաղաքապետարանի աշխատակազմի բարեխիղճ և հետևողական աշխատանքի արդյունքն է:

Թումանյան համայնքի ղեկավար՝ /Լ. Չավարյան/

Կրտսեր պաշտոնների առաջին ենթախմբի առաջատար մասնագետ - հաշվապահ՝ /Ա. Ամիրջանյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2014թվականի N 9-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի N 85-Ա որոշման հավելվածի 8-րդ և 10-րդ կետերը.

1. ՀՀ Լոռու մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ընդգրկվելու համար Թումանյան համայնքի ոչ պետական հատվածի ներկայացուցչի մրցույթը անցկացնել 2014 թվականի մարտի 10-ին ժամը 15-00-ին Թումանյանի քաղաքապետարանում :

2.Մրցույթի անցկացման մասին հայտարարությունը տեղադրել քաղաքապետարանի պաշտոնական կայքում (http://www.tumanyancity.am), ինչպես նաև քաղաքապետարանի վարչական շենքում հայտարարությունների համար նախատեսված տեղում և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
5. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2014թվականի N 10

ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի և հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2012թ. փետրվարի 9-ի <<Առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները հաստատելու մասին>> թիվ 3-Ն որոշումը.

Հաստատել Թումանյան համայնքի տարածքում գտնվող առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի վերստուգիչ մարմնի հետևյալ կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Երվանդ Շաքարյան

--//--- անդամ՝ Արման Մոսինյան

--//--- --//--- Վարդան Հախվերդյան

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
5. ՌԱՄԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2014թվականի N 11-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2013թ.դեկտեմբերի 18-ի <<Թումանյան համայնքի 2014թ. բյուջեն հաստատելու մասին >> թիվ 49-Ն որոշումը և Թումանյան քաղաքի բնակչուհի Լիզա Կոլյայի Մկրտումյանի դիմումը.

1.Թումանյանի քաղաքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 / Թումանյան քաղաքի ստորև բերված անապահով քաղաքացուն տրամադրել դրամական օգնություն .

1) Մկրտումյան Լիզա Կոլյայի - 20000 դրամ

2.Թումանյանի քաղաքապետարանի գանձապահ Հերմինե Հովսեփյանին լիազորել՝ Ալավերդու ՏԳԲ-ից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՍՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
5. ՌԱՄԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ